

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

### Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի միջև համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովը

-ընդունելով Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի եղբայրական հանրապետությունների խորհրդարանների միջև սերտ համագործակցության զարգացման կարելիությունը,

-ձգտելով օրենսդրության մերձեցմանը և ներդաշնակեցմանը,

-համոզված լինելով, որ միջխորհրդարանական համագործակցությունը կնպաստի Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջև քաղաքական, տնտեսական, գիտական և մշակութային կապերի խորացմանն ու ամրապնդմանը,

-հիմք ընդունելով ՀՀ և ԼՂՀ Ազգային ժողովների 1996թ. մարտի 1-ի համաձայնագիրը,

համաձայնվեցին ներքոշարադրյալի մասին

**1.** Միջխորհրդարանական կապերին համակարգված բնույթ տալու նպատակով պարբերաբար անցկացնել խորհրդարանական պատվիրակությունների հանդիպումներ:

**2.** Փոխգործակցության կազմակերպման և համակարգված աշխատանք իրականացնելու նպատակով ստեղծել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի միջև համագործակցության մշտապես գործող միջխորհրդարանական հանձնաժողով (այսուհետ՝ միջխորհրդարանական հանձնաժողով) կազմված ԼՂՀ և ՀՀ ԱԺ ներկայացուցիչներից, որն իր նիստերը կգումարի տարին երկու անգամ՝ Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում:

Միջխորհրդարանական հանձնաժողովը՝

**2.1.** կօժանդակի միջխորհրդարանական կապերի զարգացմանը, միջխորհրդարանական համագործակցության բոլոր ոլորտներում խորհրդատվություններին և տեղեկատվության փոխանակմանը,

**2.2.** կկազմակերպի խորհրդարանների հանձնաժողովների միջև փոխգործակցությունը, օրենսդրական գործընթացի համակարգման, խորհրդարանական գործունեության փորձի ուսումնասիրման և ընդհանրացման նպատակով կօժանդակի պատգամավորական և փորձագիտական համատեղ խմբերի ստեղծմանը,

**2.3.** կկազմակերպի համատեղ քննարկումներ՝ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող միջազգային և տարածաշրջանային հիմնահարցերի վերաբերյալ համաձայնեցված մոտեցումներ մշակելու և միջազգային խորհրդարանական կազմակերպություններում մասնակցության արդյունքների համատեղ քննարկման նպատակով:

**3.** Ապահովել Երեւանում և Ստեփանակերտում կազմակերպվող միջազգային խորհրդարանական սեմինարներին և համաժողովներին երկու կողմերի ներակայացուցիչների մասնակցությունը:

**4.** Միջազգային տարբեր կազմակերպությունների կողմից գիտաժողովներում, խորհրդակցություններում, սեմինարներում ՀՀ խորհրդարանական պատվիրակությունների կազմում հաճախակի ընդգրկել ԼՂՀ ԱԺ ներկայացուցիչներին:

5. Ապահովել ԼՂՀ ԱԺ եւ ՀՀ ԱԺ աշխատակազմերի աշխատակիցների միջեւ մշտական կապերի հաստատումը՝ փորձի փոխանակման ու որակավորման բարձրացման նպատակով:

6. Ապահովել ՀՀ եւ ԼՂՀ պետական տոն օրերի կապակցությամբ կազմակերպվող միջոցառումներին, ազգային տոնախմբություններին խորհրդարանական պատվիրակությունների փոխայցելությունները:

7. Սույն համաձայնագրի մեկնաբանման, կիրառման, ինչպես նաեւ դրա փոփոխման եւ լրացման հարցերը լուծվում են բանակցությունների, փոխադարձ խորհրդատվությունների ճանապարհով՝ ԼՂՀ Ազգային ժողովի եւ ՀՀ Ազգային ժողովի համաձայնությամբ:

Կատարված է Ստեփանակերտում, 1998 թվականի մասիսի 15-ին, երկու օրինակից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ  
ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ՝

Խ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ  
ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ՝

Օ.ԵՍԱՅԱՆ